ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն և օծում: Սուրբ և Անմահ Պատարագի ընթացքում պատարագիչ Սրբազան Հոր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի ձեռամբ հինգ սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն և օծում:

Արարատ Սրբազանը նորընծա քահանաներին վերանվանեց հոգևոր նոր անուններով. Արմենակ սրկ. Բաղալյանը վերանվանվեց Տ. Արիստակես, Արման սրկ. Մարուքյանը՝ Տ. Հովհաննես, Վարդան սրկ. Բաղումյանը՝ Տ. Վրթանես, Ավետիք սրկ. Գրիգորյանը՝ Տ. Հուսիկ, իսկ Զաքար սրկ. Սահակյանը՝ Տ. Ներսես:

Ս. Պատարագի ընթացքին՝ «Ողջույնի» պահին, Մայր Աթոռի միաբանները Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ բարձրացան Սուրբ Խորան և շնորհավորեցին նորընծաներին:

Ձեռնադրությունից հետո Արարատ Սրբազանը, իր քարոզում ուրախություն հայտնելով, որ Հայ Եկեղեցու անդաստանում սպասավորության կոչվեցին ևս հինգ եկեղեցականներ, իր պատգամն ուղղեց նորաօծ քահանա հայրերին. «Քահանայական ձեռնադրությունն ու օծումը, որ ստացաք, մեծ խորհուրդ ունի: Այսօր հանձն առաք Աստծո շնորհը, Ս. Մյուռոնի օծմամբ Աստված Սուրբ Հոգին ուղարկեց և Սուրբ Հոգու հետ միասին այն բոլոր շնորհները, որ Սուրբ Հոգին փոխանցում է յուրաքանչյուր օծյալի: Այսօր դուք ուխտ կապեցիք Աստծո հետ, որպեսզի լինեք «մշակ առանց ամօթոյ», լինեք նվիրյալ ծառաները Քրիստոսի Սուրբ Եկեղեցու: Այսօր դուք սկիզբ դրեցիք այն քայլերին, որոնք ձեր կյանքը պիտի առաջնորդեն դեպի հավատացյալ ժողովուրդը»,- ընդգծեց Սրբազան Հայրը՝ հորդորելով հավատքով, նվիրումով, հավատարմությամբ ու սիրով լծվել իրենց հոգևոր առաքելությանը:

Մայր Աթոռում քառասնօրյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո, Նորին Սրբության բարձր տնօրինությամբ նորաօծ եկեղեցականները հովվական ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱԿՈՒՍԵԼԻՔՆԵՐԸ ԸՆԴԵՍՈՒՄ ԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԸՆՏԵԼ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԲԵՐՈՒՄ
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

ՆՈՐ ՊԵՌՆԱԴՐՎԱԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ
ՊԱՐԵՄԱՊԵՏՆԵՐԻ ԻՐ ԽՈՍՔՆ Է ՈՒՂՂՈՒՄ
Տ. ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃՅԱՆԸ